# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

## «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

*Դեկտեմբերի 11-ին, 14-ին և 18-ին Մոսկվայում ակադեմիկոս Դ. Վ. Սկոբելցինի նախագահությամբ կայացան «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակների կոմիտեի նիստերը։*

*Կոմիտեն քննարկեց ընթացիկ տարվա Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին ստացված առաջարկները և որոշում ընդունեց այդ հարցի վերաբերյալ։*

*Ստորև հրապարակվում է կոմիտեի որոշումը՝ 1954 թվականի Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին։*

## «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» 1954 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 1954 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՈՐՈՇՈՒՄԸ

*Խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու պայքարի գործում աչքի ընկնող ծառայությունների համար «ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհել հետևյալ անձանց.*

ԴԵՆՆԻՍ ՆՈԵԼ ՊՐԻՏՏԻՆ — *իրավաբան (ԱՆԳԼԻԱ).*

ԱԼԵՆ ԼԸ ԼԵԱՊԻՆ — *Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի գլխավոր քարտուղար (ՖՐԱՆՍԻԱ).*

ՏԱԿԻՆ ԿՈԴՈ ԽՄԱԻՆԳԻՆ — *գրող (ԲԻՐՄԱ).*

ԲԵՐԹՈԼԴ ԲՐԵԽՏԻՆ — *բանաստեղծ և դրամատուրգ (ԳԵՐՄԱՆԻԱ).*

ՖԵԼԻՔՍ ԻՎԵՐՍԵՆԻՆ — *Հելսինկի քաղաքի համալսարանի պրոֆեսոր (ՖԻՆԼԱՆԴԻԱ).*

ԱՆԴՐԵ ԲՈՆՆԱՐԻՆ — *Լոզանի համալսարանի պրոֆեսոր (ՇՎԵՅՑԱՐԻԱ).*

ԲԱԼԴՈՄԵՐՈ ՍԱՆԻՆ ԿԱՆՈՅԻՆ — *պրոֆեսոր, Էդինբուրգի և Բոգոտայի համալսարանների պատվավոր դոկտոր (ԿՈԼՈՒՄԲԻԱ).*

ՊՐԻՅՈՆՈՅԻՆ — *պրոֆեսոր, Ջակարտայի պետական համալսարանի գրական ֆակուլտետի դեկան (ԻՆԴՈՆԵԶԻԱ).*

ՆԻԿՈԼԱՍ ԳԻԼՅԵՆԻՆ — *բանաստեղծ (ԿՈՒԲԱ)։*

**Կոմիտեի նախագահ՝** Դ. Վ. ՍԿՈԲԵԼՑԻՆ

**Կոմիտեի նախագահի տեղակալներ՝** ԳՈ ՄՈ-ԺՈ *(Չինաստան)*,
ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ *(Ֆրանսիա)*։

**Կոմիտեի անդամներ՝**

ԱՆՆԱ ԶԵԳԵՐՍ *(Գերմանիա)*,
ԱՆՏՈՆԻՈ ԲԱՆՖԻ *(Իտալիա)*,
ՋՈՆ ԲԵՌՆԱԼ *(Անգլիա)*,
ՅԱՆ ԴԵՄԲՈՎՍԿԻ *(Լեհաստան)*,
ՊԱԲԼՈ ՆԵՐՈՒԴԱ *(Չիլի)*,
ՄԻԽԱՅԻԼ ՍԱԴՈՎՅԱՆՈՒ *(Ռումինիա)*,
ՍԱՀԻԲ ՍԻՆԳ ՍՈԿՀԵՅ *(Հնդկաստան)*,
Գ. Վ. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ *(ՍՍՌՄ)*,
Ա. Ա. ՖԱԴԵԵՎ *(ՍՍՌՄ)*,
Ի. Գ. ԷՐԵՆԲՈՒՐԳ *(ՍՍՌՄ)*։

*18 դեկտեմբերի 1954 թ.,*

*քաղ. Մոսկվա*

**(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ,
21 դեկտեմբերի 1954 թ.)**

